ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-22/14-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.02.2022թ. ժամը 14-30-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արտաշես Սուչյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Դավիթ Աղաբալյանը, Զաքար Ստեփանյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

Օրակարգ

<u>Աճուրդի արդյունքների անփոփում և գնահատում</u>

1. Աճուրդի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-22/14-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները.

1. ''Քրոու ընդ Ասատրյանս'' ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան,Արգիշտի 7, Դոմ Մոսկվի)
2. ''ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս'' ՍՊԸ /ՀՀ/
3. ''Փըրֆեքթ Աուդիտ'' ՍՊԸ/ՀՀ/
4. ''ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ'' ՍՊԸ/ՀՀ/

2. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը բավարարում է հրավերի պահանջներին, Հավելված 1.2-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագում կան անհամապատասխանություններ՝ **4.3.2. և 4.4.2.** կետերում ''Համայնքը'' նշված է ''Երևան'', իսկ **4.3.3.և 4.4.3.** կետերում ''Վարչատարածքային միավորը''՝ ''Կենտրոն'':

4. Հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների առաջարկած գները և նախահաշվային գինը

Չափաբաժին 1՝ ներքին աուդիտի ծառայություններ

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ	11530000 AMD	9400000 AMD	20 %	11280000.00 AMD	
1	2	ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս ՍՊԸ	11530000 AMD	9500000 AMD	20 %	11400000.00 AMD	
1	3	Փըրֆեքթ Աուդիտ ՍՊԸ	11530000 AMD	9608000 AMD	20 %	11529600.00 AMD	
1	4	ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ	11530000 AMD	12500000 AMD	20 %	15000000.00 AMD	Մերժված

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

5.1 Հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ նիստը կասեցնել է մեկ աշխատանքային օրով՝ մինչև 16.02.2022թ.-ի ժամը՝ 18:00-ն, որպիսի ''Քրոու ընդ Ասատրյանս'' ՍՊԸ-ի կողմից շտկվի անհամապատասխանությունը:
2. Նիստը շարունակել 2022թ. փետրվարի 17-ին, ժամը 10:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Քարտուղարին՝

Eauction.armeps.am համակարգի միջոցով այսօր տեղեկացնել ''Քրոու ընդ Ասատրյանս'' ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Արտաշես Սուչյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Դավիթ Աղաբալյան

_____ Զաքար Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

(շարունակություն)

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-22/14-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.02.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արտաշես Սուչյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Դավիթ Աղաբալյանը, Զաքար Ստեփանյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 ''Քրոու ընդ Ասատրյանս'' ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, որի հիման վրա որոշեց՝

1. Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ''Քրոու ընդ Ասատրյանս'' ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել ընտրված մասնակից:
2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
3. Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
4. «ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-22/14-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Արտաշես Սուչյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Դավիթ Աղաբալյան

_____ Զաքար Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան